

և Սարգսի և[ւ] գրագիր Վարդանայ, Կրիգոր[ի]սի, Մարգարեին և Ռստակէս միայնակեցին և որ զգիրս գրեաց (նախագաղափարի մասին է— Ա. Մ.) և ծնողաց նուցա և եղբարց նոցա...», «... Զծեր Յակոբ վարդապետն յիշեցէր տէր»⁵⁴, «Ողորմեա Բարսեղին, որ զարինակս պատրաստեաց»⁵⁵, «զԹաւրոս եղբայր, որ բարիոք սպասաւորէ, յիշեալ, Քրիստոս աստուած»⁵⁶: Սրանց, ինչպես նաև գրիչ Վարդանին հանդիպում ենք Դարանաղի գավառի Սեպուհ լեռան (Լուսավորչի լեռ) վրա գտնվող Ավագ վանքում: «Ի գաւառիս Դարանաղեաց, ի լեռոն սրբոյ Լուսաւորչին մերոյ մեծին Գրիգորի մերձ ի յայրս սրբուհւոյն Մանէ» որ հետո չէր Ավագ վանքից և միշտ կապված էին իրար հետ, «...ընդ հովանեաւ» Լուսավորչաշէն սուրբ Կարապետի»: 1201 թ. Հովհաննէս գրիչը ընդօրինակում է մի Ավետարան, ուր հիշում է «զՅովհաննէս քահանայ՝ սպասաւոր սուրբ և գերահռչակ սուրբ Կարապետիս»: Նույն թվականին Լուսավորչի վանքում Ղազար գրիչը՝ իր ընդօրինակած Ավետարանում թվարկելով «զվարդապետսն մեր» ի շարս այլոց հիշում է նաև «զՅովհաննէս ծեր, զՎարդան»⁵⁸: 1201 թվականին Ստեփանոս գրիչը «ի գաւառիս Դարանաղեաց... անապատիս կոչեցելոյ Աւագ վանք» օրինակում է մի Ավետարան և հիշում «զբարի առաջնորդ սրբոյ ուխտիս զտէր Սարգիս»⁵⁹: Վերջինս Վարդանի՝ 1200 թ. նույն վայրում օրինակած Ավետարանի ստացողն է, որտեղ նա կոչվում է «վերապիտող նահանգիս»: Սարգիսը, ինչպես տեսնում ենք, Աւագ վանքի առաջնորդն է, իսկ Հովհաննէս ծերը՝ սուրբ Կարապետի առաջնորդը: Եվ որովհետև Վարդանը Տօնականը օրինակում էր «ընդ հովանեաւ սուրբ Կարապետին», դրա համար սկզբում հիշում է նրա առաջնորդ «զՅովհաննէս պատուական ծերն» և ապա Աւագ վանքի առաջնորդ Սարգսին:

Այստեղ է նաև Աստուածատուրը. Վարդանը ուխտի առաջնորդներ Հովհաննէս ծերից և Սարգսից հետո հիշում է Աստուածատուրին, «որ ի գիրս աւժանդակեաց»: Սա վերը հիշված գրիչ Ղազար վարդապետի եղբայրն էր, որ 1201 թ. ընդօրինակության ժամանակ «միշտ սպասաւորէ մերում տկարութեանս»⁶⁰:

54 Անդ, էջ 73բ:

55 Անդ, էջ 73բ:

56 Անդ, էջ 461բ:

57 Յիշատակարանք, Ա, էջ 686—687:

58 Անդ, էջ 684, 688:

59 Մատենադարան, ձեռ. № 6332, էջ 7: Ի դեպ Վարդան, Յովհաննէս, Ղազար և Ստեփանոս գրիչների ավետարաններն ընդօրինակվել են միևնույն գաղափար օրինակից: Բոլորի մոտ գլխավոր հիշատակարանները շատ տեղեր համընկնում են, իսկ օրինակը համարվում է ռեֆերտ և ստույգ... ամենայն արհեստի լի և պատարուն, բան և տնհատ, հրաման և ստորատ, միջնակտուր և վերնակետ»: Ստեփանոսը գրում է, որ այդ օրինակը Կոզմա հոռոտրի ընդօրինակածն է: Սրանցից առաջին գրիչ օրինակածը այժմ Նյու-Յորքում է, վերջինը՝ Մաշտոցյան մատենադարանում, իսկ մյուսները խիստ համառոտ նկարագրված են Թորգոմ Գուշակյանի կազմած Սերաստիայի Սուրբ Նշան վանքի ձեռագրաց ցուցակում (Թորգոմ արք. Գուշակյան, Ցուցակ հայերէն ձեռագրաց Սուրբ Նշանի վանուց ի Սերաստիա, Վիեննա, 1961, էջ 12—14, թիւ 12, 13): Այստեղ միայն Ղազարի Աւետարանի հիշատակագրութուններն ու հիշատակարանն է բերված, իսկ Հովհաննէս գրիչ ընդօրինակության մասին գրում է. «շուրաքանչյուր ավետարանի վերջը կան հիշատակարաններ, որոնք բոլորովին նույնն են թիվ 12 գրչագրի հիշատակարաններու հետ, հազիվ մեկ կամ երկու անվան տարբերությամբ: Բուն հիշատակարանը գրեթե թիվ 12-ի բովանդակութունն ունի, ուստի զանց կառնվի» (Անդ, էջ 14): Բարեբախտաբար այդ երկու ձեռագիրն էլ պրկված են, և այժմ գտնվում են Երուսաղեմի սուրբ Հակոբյանց մատենադարանում:

60 Յիշատակարանք, Ա, էջ 687: